

Հ Հ Ի Բ Ա Վ Ա Ք Ա Ն Ն Ե Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ե Պ Հ Ի Բ Ա Վ Ա Ք Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ֆ Ա Վ Ո Ւ Լ Տ Ե Տ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 4 (74)

2016 թ.

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

4.11.2016

Հանձնված է տպագրության

26.01.2017

СОЮЗ ЮРИСТОВ РА
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 3 (73)
2016 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 04.11.2016
Подписано к печати 26.01.2017

ՔՐԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Варе Геворкян

К ВОПРОСУ О ТЕЛЕОЛОГИЧЕСКОЙ РОЛИ ПРАВОВЫХ
ФУНКЦИЙ ГОСУДАРСТВА 5

Վարսեր Վարապետյան

ԿՐՈՆԻ ՀԵՏ ՓՈՒՆՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ
ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ..... 11

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աիդա Իսկոյան, Օլիմպիա Գեղամյան

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ,
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 21

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Պետրոսյան, Լաուրա Զոհրաբյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ..... 33

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարդուհի Դանիելյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆԱԴԻՐ ԿՈՂՄԵՐԻ
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ 45

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Борис Гаврилов

РОССИЙСКОЕ ДОСУДЕБНОЕ ПРОИЗВОДСТВО И МЕРЫ ПО ЕГО
СОВЕРШЕНСТВОВАНИЮ: МНЕНИЕ УЧЕНОГО И ПРАКТИКА 54

Արա Ֆիդանյան

«ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱՆԵՐԻՆԵՐ 62

Լալա Գրիգորյան

ՀԱՆՑԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ
ԲԱԶՄԱՎԻՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՁԵՎԵՐԻ ՀԵՏ..... 73

Գուրգեն Քոթանջյան

ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 82

Տաթևիկ Գևորգյան

ՀԱՆՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱՎԻՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՏԵՍԱԿՆԵՐԸ 90

Դավիթ Զիլֆիմյան

ԱՆՁԱՓՈՒՀԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ
ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԵՎ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ102

Նարեկ Մինասյան

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ.....109

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿՈՒՆՔ

Սաբինա Մադոյան

ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ
ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ.....117

**ԷԿՈՆՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ «ԷԿՈՆՈԳԻԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՅԱՑՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ¹**

Աիդա Իսկոյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր,
Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի ղեկավար,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Օլիմպիա Գեղամյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Յուրաքանչյուր հասարակության առաջընթացի կարևորագույն նախապայմաններից մեկը իրավագիտակցության բարձր մակարդակն է, ինչն ինքնին նաև տեղեկացվածության դրսևորում է: Տեղեկատվությունն ու դրանով զինված լինելը իրավամբ հզորացնում են ինչպես պետությունն ու հասարակությունը, այնպես էլ անհատին:

Պետության զարգացման և շրջակա միջավայրի որակի ապահովման համատեքստում ամենաազդեցիկ և զգայուն ոլորտներից է մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորումը, որտեղ իր հիմնարար դերն ու նշանակությունն ունի էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրավունքը: Այն անհատ-հասարակություն-պետություն շրջանակում շահերի ու փոխզիջումների հավասարակշռության հիմնարար եզրույթ է: Երկրի տեղեկատվական կապիտալի և այն բացարձակ տնօրինելու համատեքստում մարդու էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրավունքը կոչված է ապահովելու անհատի տեղեկատվական դաշտի սահմանները՝ հաշվի առնելով թե՛ անհատի նորմալ կենսագործունեությունը, թե՛ պետության ներքին ու արտաքին քաղաքականության ամենատարբեր գործընթացները:

Վերոհիշյալի հետ մեկտեղ՝ չենք կարող անտեսել, որ քաղաքակրթության ժամանակակից փուլին բնորոշ գիտատեխնիկական առաջընթացն ու տնտեսական շահի գերակայությունը լուրջ սպառնալիք են ստեղծել ինչպես անհատի, այնպես էլ

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-5E334 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 15T-5E334.

This work was supported by the RA MES State Committee of Science, in the frames of the research project № 15T-5E334.

հասարակության ու պետությունների համար՝ ընդգրկելով ողջ երկրագունդը: Աշխարհում էկոլոգիական հավասարակշռության պահպանման հիմնարար ուղին հանդիսանում է պետությունների լայն համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության, ռացիոնալ բնօգտագործման բնագավառում: Նման հավասարակշռության ապահովման համար հիմնարար հիմք է հանդիսանում ամբողջական ու ժամանակին տրամադրվող տեղեկատվությունը: Պատշաճ տեղեկացվածությունը բարենպաստ, մաքուր ու առողջ շրջակա միջավայրի ապահովման ամենազոր գործոններից է, մինչդեռ տեղեկատվական դաշտի խեղաթյուրվածությունն անխուսափելիորեն հանգեցնում է ապակողմնորոշման ու հասարակական հավասարակշռության լուրջ խախտումների: Տեղեկացվածությունը բարձրացնում է էկոլոգիական ռիսկերից խուսափելու հնարավորությունները և նպաստում ռեսուրսների արդյունավետ կառավարմանը:

Ու թեև տեղեկատվության մատչելիության իրավունքում ներառված տեղեկություններ որոնելու, ստանալու, տարածելու բաղադրիչն ուղղակիորեն նախատեսված է դեռևս 1948թ. ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի¹ 19-րդ հոդվածում, 1950թ. ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի² 10-րդ հոդվածում, 1966թ. ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» համաձայնագրի³ 19-րդ հոդվածում, 1972թ. Ստոկհոլմում ընդունված «Շրջակա միջավայրի վերաբերյալ սկզբունքներ» հռչակագիրը⁴ և դրան հաջորդած 1992թ. Ռիո դե Ժանեյրոյում ընդունված Հռչակագրի⁵ 10-րդ սկզբունքում, «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիայում⁶, սակայն վերոհիշյալ և բազմաթիվ այլ ակտեր ևս չեն դարձել էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրավական կարգավորման համապարփակ ու լիարժեք լուծումների հենաքար, քանի որ դրանցում առավելապես առանձին հոդվածի տեսքով ամրագրվել է լոկ տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունն ընդհանրապես, և այն ընկալվել է որպես խոսքի ազատության իրավունքի մաս: Ուշագրավ է, որ 20-րդ դարի 2-րդ կեսն առանձնանում է նաև տեղեկատվության մատչելիության վերաբերյալ տարածաշրջանային փաստաթղթերով, ինչպիսիք են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից ընդունված «Միջսահմանային ջրահոսքերի և լճերի օգտագործման մասին»⁷, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիան⁸ (կետ 1, հոդված 9) և մի շարք այլ փաստաթղթեր:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ այս ոլորտի եվրոպական օրենսդրությունը ևս լուրջ տեղ է հատկացնում էկոլոգիական տեղեկատվության մատչելիության ինստիտուտին: Մասնավորապես, 2008թ. նոյեմբերի 27-ին Եվրոպայի խորհրդի ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոն-

¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ. Պաշտոնական տեղեկագիր. Հրատարակչության երրորդ տարի N 4 (12) 20.12.2004:

² Տե՛ս ՀՀ ԱԳՆ. Պաշտոնական տեղեկագիր. 05.06.2002 05/17 (192):

³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ. Պաշտոնական տեղեկագիր. 1997.12.25/29:

⁴ <http://www.unep.org/documents.multilingual/default.asp?documentid=97&articleid=1503>:

⁵ <http://www.unep.org/documents.multilingual/default.asp?documentid=78&articleid=1163>:

⁶ Ընդունվել է 2001 թ., ՀՀ կողմից վավերացվել է 22.10.2003, ուժի մեջ է մտել 26.11.2003. <http://www.mnp.am/?p=201>:

⁷ <http://www.unece.org/env/water.html>

⁸ Ընդունվել է 1992թ. Հելսինկիում, ՀՀ կողմից վավերացվել է 14.05.1996, ուժի մեջ է մտել 21.02.1997, <http://www.mnp.am/?p=201>:

վենցիան¹ պարտավորեցնում է անդամ պետություններին ապահովել պետական մարմինների տնօրինության ներքո գտնվող տեղեկատվության մատչելիությունը: Խիստ առաջադիմական քայլ պետք է համարել հատկապես Եվրոպական միության կողմից ընդունված 2003/4 դիրեկտիվը «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության» մասին², որը, փոխարինելով նույնանուն 90/313 դիրեկտիվին³, ավելի է ընդլայնել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության սահմանները: Տեղեկատվության մատչելիության, այդ թվում էլ կոլոգիական տեղեկատվության մատչելիությանը առնչվող գործերի քննությամբ ևս ակնհայտ է դառնում, որ թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, թե՛ Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը հատկապես վերջին շրջանում առավել մեծ ուշադրություն են հատկացնում բնապահպանական արժեքներին՝ երաշխավորելով բոլորի և յուրաքանչյուրի իրավունքը պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը, եթե չկան դրանց տրամադրումը մերժելու օրինական հիմքեր⁴:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ պետական մարմինների տնօրինության ներքո գտնվող տեղեկատվության մատչելիության հիմնախնդիրները իրավական կարգավորում են ստացել բազմաթիվ երկրների ազգային օրենսդրության մակարդակով: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովը 2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որը իրավունք է նախատեսում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններից, ինչպես նաև հանրային նշանակության մասնավոր կազմակերպություններից (ներառյալ հանրային ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև որևէ ապրանքի կամ ծառայության մատակարարման ոլորտում մենաշնորհի կամ «գերիշխող դիրք» ունեցող մասնավոր կազմակերպությունները) ստանալ նրանց տնօրինության տակ գտնվող համապատասխան տեղեկատվությունը: Սակայն ակնհայտ է, որ ներկայիս գլոբալ էկոլոգիական ճգնաժամի և ողջ մարդկությունը շղթայող էկոլոգիական տեղեկատվության կարևորությունից ելնելով՝ միջազգային փաստաթղթերն առավել արժեքավոր են, քանի որ նպատակ են հետապնդում էկոլոգիական տեղեկատվության ոլորտի համընդհանուր չափորոշիչներ սահմանել, ինչն առավել մեծ երաշխիք է յուրաքանչյուրի՝ առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու, էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրավունքի արդյունավետ իրացման ու պաշտպանության համար:

Այս ոլորտի բացառիկ կարևորության ակտ է «Էկոլոգիական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան⁵ (այսուհետ՝ Օրիուսի կոնվենցիա), որը ամբողջական ու լիարժեք իրավական կարգավորում է տալիս հարցի վերաբերյալ կարգավորման առանձնահատկություններին: Օրիուսի կոն-

¹ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900016804803cc>:

² <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2003:041:0026:0032:EN:PDF>:

³ Տե՛ս **Maria Lee**, *EU Environmental Law*, Oxford 2014, second addition:

⁴ Տե՛ս **O. Չեղամյան**, Էկոլոգիական իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, գլխ. խմբագիր **Գ.Ս.Ղազինյան**, Երևան, ԵՊՀ իրատ, 2016, էջ 212-231: **Ludwig Kramer**, *EU Casebook on Environmental Law*, 2002, էջ 121:

⁵ <http://www.mnp.am/?p=201>

վենցիայի դրույթները համարվում են բնագավառի հարաբերությունների իրավական կարգավորման հենասյունը:

Ըստ Օրհուսի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետի՝ էկոլոգիական համարվում է գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչի վրա ցանկացած տեղեկատվություն հետևյալի մասին.

ա. շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ, ինչպիսիք են օդը, մթնոլորտը, ջրերը, բնահողը, լանդշաֆտը, բնական օբյեկտները, կենսաբազմազանությունը և նրա բաղադրիչները, ներառյալ գենետիկորեն փոփոխված օրգանիզմները և փոխազդեցությունը նշված բաղադրիչների միջև,

բ. այնպիսի գործոնների մասին, ինչպիսիք են նյութերը, էներգիան, աղմուկը և ճառագայթումը, ինչպես նաև գործունեությունը կամ միջոցները, ներառյալ վարչական միջոցները, շրջակա միջավայրի ոլորտի համաձայնագրերը, քաղաքականությունները, օրենսդրությունը, պլանները և ծրագրերը, որոնք ազդում են կամ կարող են ազդել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ա) ենթակետի իմաստով, ծախսեր-արդյունքներ հարաբերակցությունը և այլ տնտեսական վերլուծություններ ու ենթադրություններ, որոնք հաշվի են առնվում շրջակա միջավայրի առնչությամբ որոշումներ ընդունելիս,

գ. մարդկանց առողջության և անվտանգության, կենսապայմանների, մշակութային օբյեկտների ու շինությունների մասին այնքանով, որքանով դրանք կրում են կամ կարող են կրել շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի կամ այդ բաղադրիչներով միջնորդավորված ազդակների, գործունեության կամ վերը՝ բ) ենթակետում, հիշատակված միջոցների ազդեցությունը:

Նախ պետք է նշել, որ Օրհուսի կոնվենցիան առաջին միջազգային փաստաթուղթն է, որտեղ սահմանվում է «էկոլոգիական տեղեկատվություն» հասկացությունը: Այդ հասկացությունը, ի թիվս շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի, դրանց փոխազդեցությունների, դրանց վրա ազդող կամ ազդելու հնարավորություն պարունակող գործունեության, ներառում է նաև այս ոլորտի օրենսդրության, քաղաքականության, պլանների, ծրագրերի, որոշ դեպքերում ծախս-արդյունք հարաբերակցության, վարչական միջոցների մասին տեղեկատվությունը¹:

«Սահմանադրության»² 51-րդ հոդվածը գործածում է «տեղեկություն» եզրույթը: Ընդհանուր առմամբ դրական ենք վերաբերվում այն մտեցմանը, որ տեղեկատվության մատչելիության իրավունքին նվիրվել է մեկ ամփոփ դրույթ: Այդուհանդերձ, Սահմանադրության հիշյալ հոդվածի խմբագրության վերաբերյալ ունենք հետևյալ նկատառումները:

Նախ, «տեղեկություններ» եզրույթի բովանդակային ընդգրկումն ավելի նեղ է, քան «տեղեկատվություն» եզրույթինը: Վերջինի ներքո աներկաբայորեն ենթադրվում են նաև մշակված, ամփոփված տեղեկությունների հիման վրա ձևավորված նյութերը, որոնք ևս ենթակա են տրամադրման՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Գտնում ենք, որ «տեղեկություններ» եզրույթի կիրառումը կարող է նախադեպեր ստեղծել հանրության համար մատչելի տեղեկատվության ծավալը սահմանափակելու համար:

Այս համատեքստում նշենք, որ հիշյալ երկու տերմինները բովանդակային առումով տարանջատվում են նաև անգլալեզու և ռուսալեզու աղբյուրներում՝

¹ Տե՛ս «Քլոլոգիական իրավունք. իրավական ակտերի ժողովածու, պատասխանատու խմբ. Ա. Բ. Իսկոյան (երրորդ լրամշակված հրատարակություն), Երևան, 2009, էջ 6:

² ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, ընդունված է 06.12.2015, ուժի մեջ է մտել 22.12.2015:

«Information» - «data» և «информация» - «сведения»:

Երկրորդ, գտնում ենք, որ «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ» արտահայտությունն էականորեն նեղացնում է տեղեկատվության բովանդակային շրջանակը: Ակնհայտ է, որ գործունեության մասին տեղեկատվությունը շատ ավելի սահմանափակ է, քան իրավասության ոլորտի տեղեկատվությունը, որը ոչ միշտ է ուղղակիորեն կապված գործունեության հետ: Բացի այդ, «գործունեություն» բառի իրավաբանական բովանդակությունն ինքնին հստակ չէ¹:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և սահմանված է միայն «տեղեկություն» հասկացությունը, որը անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, զժագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)²: Ակնհայտորեն վերոհիշյալ օրենքի ձևակերպումն առավել նեղ իմաստով է արտահայտում «տեղեկատվության» և առավել ևս «էկոլոգիական տեղեկատվության» բովանդակությունն ու շրջանակը:

Օրիուսի կոնվենցիայի՝ էկոլոգիական տեղեկատվության կարգավորման դրույթները զետեղված են 4-րդ հոդվածում, որը վերաբերում է էկոլոգիական տեղեկատվության մատչելիությանը, և 5-րդ հոդվածում, որը վերաբերում է էկոլոգիական տեղեկատվության հավաքմանն ու տարածմանը:

Այսպիսով, 4-րդ հոդվածը նախատեսում է այն կառուցակարգը, որը թույլ է տալիս հասարակայնությանը խնդրել և ստանալ էկոլոգիական տեղեկատվություն, այսինքն՝ երբ հասարակայնության որևէ ներկայացուցիչ հարցում է ուղարկում պետական մարմինն՝ խնդրելով տրամադրել էկոլոգիական տեղեկատվություն, անմիջականորեն սկսում է գործել Օրիուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածը: Կոնվենցիայի համաձայն՝ նման իրավունքով օժտված է հասարակայնության ցանկացած անհամ: Իսկ 5-րդ հոդվածը նախատեսում է այն պահանջները, որի շրջանակներում պետական մարմինները հավաքում են էկոլոգիական տեղեկատվությունը, որպեսզի, առանց կոնկրետ հարցումների, ակտիվորեն տարածեն այն հասարակայնության շրջանակներում: Էկոլոգիական տեղեկատվություն ստանալու վերոհիշյալ երկու եղանակների դրսևորումները հանդես են գալիս որպես էկոլոգիական տեղեկատվության տարածման համապատասխանաբար պասիվ եղանակ, երբ տեղեկատվությունը տրամադրվում է՝ ի պատասխան ներկայացված հարցման, և էկոլոգիական տեղեկատվության տարածման ակտիվ եղանակ, երբ տեղեկատվություն տնօրինողը տեղեկատվությունը տարածում է ըստ անհրաժեշտության: Ու թեև Կոնվենցիայի 4-րդ հոդվածը սահմանում է էկոլոգիական տեղեկատվության տրամադրման ողջամիտ ժամկետի, տրամադրվող էկոլոգիական տեղեկատվության փաստաթղթային ձևակերպումների, տրամադրելը մերժելու հստակ հիմքերի իրավական կարգավորումները, սակայն պետք է միաժամանակ նշել, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը նախատեսում է 4-րդ հոդվածով տրամադրվող ցանկացած պահանջի խախտումը բողոքարկելու հնարավորություն: Մասնավորապես, «Յուրաքանչյուր կողմ ազգային օերնսդրության սահմաններում պարտավոր է ապահովել, որ ցանկացած անձ, ով կարծում է, որ 4-րդ հոդվածի պայմաններին համապատասխան ներկայացված տեղեկատվություն ստանալու մասին իր հարցումը չի քննարկվել, մասամբ

¹ http://www.elrc.yso.am/?page=news&id=217&type=6&language_id=1:

² ՀՀ ՊՏ 2003.11.05/55 (290), ընդունված է 23.09.2003, ուժի մեջ է մտել 15.11.2003:

կամ ամբողջությամբ անհիմն մերժվել է, պատշաճ ձևով չի բավարարվել, կամ այդ հարցման նկատմամբ ցուցաբերվել է սույն հոդվածի դրույթներին չհամապատասխանող մոտեցում, ունենա դատարանում կամ օրենքին համապատասխան ստեղծված այլ անկախ ու անկողմնակալ մարմնում ընդունված որոշման վերանայման հնարավորություն: ... ընդունված վերջնական որոշումները պարտադիր են համապատասխան տեղեկատվությունը տիրապետող պետական մարմնի համար»¹:

Օրհուսի կոնվենցիայի բացառիկ արժեքը դրսևորվում է նաև այն հանգամանքում, որ 4-րդ հոդվածով սահմանված էկոլոգիական տեղեկատվության հարցման և ստանալու մեծ քանակով պահանջների շարքում պետական մարմիններին թույլատրում է մերժել էկոլոգիական տեղեկատվության տրամադրումը, միայն եթե.

ա. հարցումը ստացած պետական մարմինը չի տիրապետում այդ տեղեկատվությանը,

բ. հարցումն ակնհայտորեն անհիմն է կամ ձևակերպված է չափազանց ընդհանուր ձևով, կամ

գ. հարցումն առնչվում է նյութերի, որոնք գտնվում են նախապատրաստման վերջնական փուլում, կամ վերաբերում է պետական մարմինների ներքին գրագրությանը, եթե նման բացառություն նախատեսված է ազգային օրենսդրությամբ կամ ձևավորված պրակտիկայով՝ հաշվի առնելով հասարակայնության շահագրգռվածությունը այդ տեղեկատվության հրապարակման հարցում:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Օրհուսի կոնվենցիան չի պարտավորեցնում Կողմերին կիրառել այս բացառությունները, և ելնելով իրավիճակից, ազգային օրենսդրությունից, յուրաքանչյուր Կողմ ինքն է որոշում մերժել արդյոք տեղեկատվության տրամադրումը վերոհիշյալ հիմքերով, թե՞ ոչ: Կիրառելու դեպքում Կողմը պետք է հիմնավորի, թե ինչ է նշանակում «ակնհայտորեն անհիմն» կամ «ձևակերպված է չափազանց ընդհանուր ձևով» կամ «ներքին գրագրություն»² պայմանները: Ելնելով այն փաստից, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի որևէ դրույթ ևս պարտադիր պահանջներ չի ներկայացնում տեղեկատվության հարցման հիմքերի առնչությամբ, ուստի Հայաստանի Հանրապետությունում Օրհուսի կոնվենցիայի վերոհիշյալ դրույթները գործում են անմիջականորեն:

Ըստ Օրհուսի կոնվենցիայի. «Յուրաքանչյուր կողմ ապահովում է, որ ... պետական մարմինները, ի պատասխան էկոլոգիական տեղեկատվության տրամադրման հարցման, ազգային օրենսդրության շրջանակներում հասարակայնությանը տրամադրեն այդպիսի տեղեկատվություն, ներառյալ այդպիսի տեղեկատվություն պարունակող կամ ներառող փաստաթղթերի պատճենները անհրաժեշտության դեպքում նաև ներքոհիշյալ բ. կետին համապատասխան

ա. առանց իր շահագրգռվածությունը ձևակերպելու անհրաժեշտության.

բ. պահանջվող ձևով, եթե

պետական մարմինը չի հիմնավորում տեղեկատվությունն այլ ձևով ներկայացնելու անհրաժեշտությունը. այս դեպքում տեղեկատվությունը տվյալ ձևով տրամադրելու հիմնավորումը պետք է լինի պատճառաբանված,

հասաակայնությանն այլ ձևով արդեն իսկ չի տրամադրվել հարցվող տեղեկատվությունը»:

Կոնվենցիայի վերոհիշյալ հոդվածը ուղղակիորեն հղում է կատարում ներկայացվող պահանջներն ազգային օրենսդրության շրջանակներում իրագործելու փաս-

¹ Орхусская конвенция. Руководство по осуществлению, второе издание, 2014, էջ 91:

² ECE/MP.PP/C.1/2012/12, пункт 75:

տին, ինչը նշանակում է, որ ազգային օրենսդրությունը պետք է սահմանի տեղեկատվություն տրամադրելու հարցմանը պատասխանելու Կոնվենցիայով նախատեսված համապատասխան կարգ, և ազգային օրենսդրությունը կարող է սահմանափակել էկոլոգիական տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունը՝ հիմնվելով Կոնվենցիայով նախատեսված սահմանափակումների վրա: Եվ քանի որ Կոնվենցիան չի պարտադրում տեղեկատվության հարցման կոնկրետ ձևաթուղթ, եզրակացնում ենք, որ 4-րդ հոդվածի պահանջներին վերաբերող ցանկացած խնդրանք, անկախ բանավոր կամ գրավոր ձևից, համավում է Կոնվենցիային համապատասխան: Ուշագրավ է, որ թեև Կոնվենցիան չի պահանջում հարցման մեջ պարտադիր ձևով նշել տվյալ տեղեկատվության անհրաժեշտությունը, կամ նախատեսված է արդյոք նման տեղեկատվությունը Կոնվենցիայով, թե՞ ոչ, սակայն արդյունավետ պրակտիկայի ձևավորման տեսանկյունից առավել հիմնավորված է, եթե հայցողը իր համապատասխան հարցման մեջ կոնկրետ մատնանշում է, որ հարցվող տեղեկատվությունն ընդգրկված է Օրիուսի կոնվենցիայով նախատեսված էկոլոգիական տեղեկատվություն հասկացության մեջ, ինչը նաև կարևոր երաշխիք է տեղեկատվության տրամադրման հնարավոր ավելորդ հետաձգումներից խուսափելու համար: Կոնվենցիայի վերոհիշյալ կետն ուղղակիորեն ամրագրում է նաև, որ հարցվող տեղեկատվությունը լինի համապատասխան փաստաթղթերի պատճենների տեսքով և ոչ թե համապատասխան պետական մարմնի կողմից մշակված կամ հակիրճ ձևակերպած փաստաթղթի տեսքով, քանի որ դա հնարավորություն է տալիս հնարավորինս ամբողջական ու լիարժեք տեղեկատվություն ստանալու համար: Իհարկե, համապատասխան անձը կարող է խնդրել, որ իրեն տրամադրվող էկոլոգիական տեղեկատվությունը տրամադրվի կոնկրետ նյութական կրիչի կամ ձայնային կրիչի վրա, կամ էլեկտրոնային տարբերակով կամ նույնիսկ ոչ թե փաստաթղթերի պատճենների, այլ բնօրինակներին ծանոթանալու հնարավորության միջոցով: Պահանջվող յուրաքանչյուր կոնկրետ ձև կարող է կապված լինել տեղեկատվությունն առավել օպերատիվ ստանալու, առավել քիչ ծախսեր հոգալու, անձի ֆիզիկական կարողությունների սահմանափակումների և բազմաթիվ այլ օբյեկտիվ հանգամանքների հետ: Այնուամենայնիվ, պետական մարմինը Կոնվենցիայի դրույթներին համապատասխան պարտավոր է բավարարել ներկայացվող խնդրանքը: Ելնելով պետական մարմինների աշխատանքային ծանրաբեռնվածությունից և առանձին դեպքերում որոշակի անհրաժեշտությունից՝ նույն հոդվածը պետական մարմինների համար նաև նախատեսում է անհրաժեշտ պատճառաբանության առկայության կամ հարցվող տեղեկատվությունը հասարակայնությանն այլ ձևով արդեն իսկ տրամադրած լինելու պարագայում մերժել հարցվող տեղեկատվությունը պահանջվող ձևով տրամադրելու պահանջը: Ակնհայտ է, որ Կոնվենցիան առաջնորդվել է այն պարզ տրամաբանությամբ, որ հանրամատչելի տեղեկատվության առկայության պարագայում հնարավորինս պետք է խուսափել պետական մարմիններին ժամանակատար պարտավորություններով ծանրաբեռնելու պրակտիկայից:

Ինչ վերաբերում է 4-րդ հոդվածի այն կետին, որի համաձայն էկոլոգիական տեղեկատվության տրամադրման համար դիմած անձը այն պետք է ստանա առանց իր շահագրգռվածությունը հիմնավորելու, ապա Կոնվենցիան, հավատարիմ մնալով «էկոլոգիական տեղեկատվությունը պետք է տրամադրվի դրա համար դիմած ցանկացած անձի» ձևակերպմանը, իրավունք չի տալիս պետական մարմիններին պահանջելու հիմնավորել, թե ինչ պատճառով է հայցվում էկոլոգիական տեղե-

կատվությունը, կամ ինչպես է պատրաստվում այն ստացող անձը օգտագործել է-կոլոգիական տեղեկատվությունը: Համապատասխան ոլորտի նմանատիպ պրակ-տիկա է ձևավորված Կրաստանում, Ղազախստանում: «Տեղեկատվության ազա-տության մասին» ՀՀ օրենքն այս խնդրի իրավական կարգավորմանն անդրադառ-նում է միայն այն մասով, որ «... բանավոր հարցման պատասխանը տրվում է բա-նավոր (ընդգծումը մերն է) հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետներում»:

Բնականաբար, ցանկացած տեղեկատվության տրամադրում կարող է անի-մաստ դառնալ, եթե չեն պահպանվում դրա տրամադրման ժամկետները, քանի որ տեղեկատվության տրամադրման կարևորագույն պայմաններից մեկը այն օրենքով սահմանված կարգով նախատեսված ժամկետում տրամադրելն է: Օրիուսի կոն-վենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ էկոլոգիական տեղեկատվությունը պետք է տրամադրվի առավելագույն սեղմ ժամկետներում, սակայն հարցման ներ-կայացման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, եթե միայն համապատաս-խան տեղեկատվության ծավալը և բարդությունը չեն արդարացնում այդ ժամկետի երկարաձգումը մինչև երկու ամիս՝ հարցման ներկայացման օրվանից սկսած: Հար-ցումը ներկայացնողը պետք է տեղեկացվի այդ ժամկետի ցանկացած երկարաձգ-ման և նման որոշման ընդունումն արդարացնող պատճառների մասին: Փաստորեն Օրիուսի կոնվենցիան տեղեկատվության տրամադրման համար նախատեսում է նախ և առաջ «առավելագույնս սեղմ ժամկետ», ապա «մեկամսյա» և առանձին դեպքերում «երկամսյա ժամկետ» պայմանները: Ընդ որում, առավելագույն սեղմ ժամկետ հասկացությունը Օրիուսի կոնվենցիայով սահմանված չէ, բայց այն են-թադրում է հնարավորինս կարճ ժամանակահատվածը, որը յուրաքանչյուր կոնկ-րետ դեպքում անհրաժեշտ է համապատասխան տեղեկատվությունը պատրաստե-լու համար: Ժամկետների պահպանումը բացառիկ կարևոր նշանակություն ունի դի-մողի հետագա քայլերի և Կոնվենցիայի գործառական դերի համար:

Ճիշտ տեղին է մատնանշել Օրիուսի կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատես-ված այն դրույթը, որի համաձայն. «Սույն կոնվենցիայի դրույթները չեն սահմանա-փակում որևէ Կողմի իրավունքը շարունակել իրագործել կամ ձեռք առնել էկոլո-գիական տեղեկատվության ավելի լայն մատչելիության միջոցներ... քան դա նա-խատեսված է սույն Կոնվենցիայով»¹: Քննարկվող խնդրի պարագայում ակնհայտ է դառնում, որ Օրիուսի կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածները զուտ նվազագույն պահանջներ են սահմանում Կողմերի համար, ուստի Կողմերն իրավունք ունեն հա-սարակայնության համար ավելի լայն հնարավորություններ սահմանել էկոլոգիա-կան տեղեկատվության մատչելիության ոլորտում: Այս մոտեցման շրջանակներում եթե Կողմ երկրի օրենսդրությամբ սահմանված է առավել կարճ ժամկետ, ապա գործում է տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված դրույթը: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

ա. եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկատվությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում.

բ. եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկատվությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դի-մողին է տրվում հարցումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում.

գ. եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար

¹ Орхусская конвенция. Руководство по осуществлению, второе издание, 2014, էջ 86:

անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո երեսնօրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետները:

Փաստորեն Օրհուսի կոնվենցիայով նախատեսված մեկամսյա ժամկետն առավել երկար ժամանակահատված է, քան դա նախատեսված է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Լատվիայի, Կրաստանի, Սլովենիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի և մի շարք այլ պետությունների օրենսդրությամբ: Վստահության մեջ կարող ենք նշել, որ այս պարագայում հենց Օրհուսի կոնվենցիան, ակնհայտորեն գերադասելով հանրային շահը, գերիշխող է հռչակում ազգային օրենսդրությունը:

Էկոլոգիական տեղեկատվության տրամադրման ժամկետի հետ սերտորեն կապված են նաև այն իրավիճակները, երբ պետական մարմինը պարզապես չի տիրապետում հարցվող տեղեկատվությանը: Այստեղ ևս Օրհուսի կոնվենցիան և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը միանգամայն արդյունավետ իրավական կարգավորում են նախատեսում: Մասնավորապես, Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Եթե պետական մարմինը չի տիրապետում հարցվող էկոլոգիական տեղեկատվությանը, ապա այդ մարմինը հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնում է հարցումը ներկայացնողին այն պետական մարմնի մասին, որին գտնում է՝ կարելի է դիմել տեղեկատվություն ստանալու պահանջով, կամ հանձնում է այդ հարցումը համապատասխան մարմնին և պատշաճ ձևով տեղյակ պահում հարցումը ներկայացնողին»: Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է. «Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Եթե տեղեկություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությանը վերաբերող մյուս տվյալները»:

Իրավագիտակցության ոչ բարձր մակարդակի, խորհրդային տարիներին գերիշխող տեղեկատվական մշակույթի փոփոխման պայմաններում խիստ առաջադիմական պետք է համարել վերոհիշյալ դրույթի առկայությունը, քանի որ այն իրական հնարավորություն է ստեղծում սխալ պատկերացմամբ հասցեատիրոջն ուղարկված էկոլոգիական տեղեկատվության տրամադրման հարցումը վերահասցեագրել տվյալ տեղեկատվությունը տնօրինող սուբյեկտին, ընդ որում տվյալ պարտավորությունը դրվում է հենց պետական մարմնի վրա:

Խիստ կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ էկոլոգիական տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերին, ըստ որի. «Էկոլոգիական տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կատարված հարցումը կարող է մերժվել, եթե այդպիսի տեղեկատվության հրապարակումը բացասաբար կանդրադառնա՝

ա. պետական մարմինների գործունեության գաղտնիության վրա, եթե այդպի-

սի գաղտնիությունը նախատեսված է ազգային օրենսդրությամբ.

բ. միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ հանրային անվտանգության վրա.

գ. արդարադատության իրականացման, անձանց՝ արդար դատական քննության իրավունքի վրա կամ պետական մարմինների քրեական կամ կարգապահական գործերով քննություններ անցկացնելու կարողության վրա.

դ. առևտրային և արդյունաբերական տեղեկատվության գաղտնիության վրա՝ այն դեպքերում, երբ նման գաղտնիությունը օրինական տնտեսական շահերի պաշտպանության նպատակով պահպանվում է օրենքով: Այս շրջանակներում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող արտանետումների մասին տեղեկատվությունը ենթակա է բացահայտման.

ե. մտավոր սեփականության իրավունքի վրա.

զ. անձնական տվյալների և/կամ ֆիզիկական անձանց վերաբերող արխիվների գաղտնիության վրա, եթե համապատասխան ֆիզիկական անձը չի տվել համաձայնություն տրամադրել այդպիսի տեղեկատվություն հասարակայնությանը՝ ելնելով ազգային օրենսդրության պահանջներից.

է. հարցվող տեղեկատվությունը ներկայացրած երրորդ կողմի շահերի վրա, եթե այդ կողմը չի կրում նման ծեղծ վարվելու իրավական պարտականություն, կամ եթե այդ կողմի վրա չի կարող դրվել այդպիսի պարտավորություն, և այն դեպքերում, երբ այդ կողմը չի տվել համաձայնություն՝ հրապարակելու համապատասխան տեղեկատվությունը, կամ

ը. շրջակա միջավայրի վրա, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը, օրինակ՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի մասին»: Այս դրույթի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Կողմերը պարտավոր չեն կիրառել բոլոր կետերը, քանի որ դրանց մի մասը կարող է ներառված չլինել ազգային օրենսդրության մեջ, որպեսզի պետական մարմինը պարտավոր լինի տրամադրել հայցվող տեղեկատվությունը: Մասնավորապես, հենց ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի տեղեկատվության ազատության սահմանափակումներն ամրագրող հոդվածում նախատեսված չէ տեղեկատվություն տրամադրելու մերժումը միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ հանրային անվտանգության վրա բացասաբար անդրադարձնալու պատճառով: Այս իրավիճակում ևս առաջնորդվելով Օրհուսի կոնվենցիայի 3-րդ հոդվածով՝ հանգում ենք այն եզրակացության, որ եթե Կողմերն ամրագրել են էկոլոգիական տեղեկատվության մատչելիության առավել լայն միջոցներ, ապա գործում են ազգային օրենսդրության նորմերը: Ի լրումն դրա՝ Օրհուսի կոնվենցիան սահմանում է, որ յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այն դեպքերում, երբ տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման վերոհիշյալ հիմքերով, այն պետք է առանձնացվի ընդհանուր տեղեկատվությունից՝ չխախտելով հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության գաղտնիությունը, և տրամադրվի պետական մարմինների կողմից:

Այսպիսով, Օրհուսի կոնվենցիայի լայն տարածումն ու հաջողությունը մեր խորին համոզմամբ պայմանավորված են դրա ճկունությամբ: Այն իրավամբ կոչված է ապահովելու հավասարակշռություն տարբեր խմբերի շահերի միջև՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթությունը, այդ թվում՝ ներկա և ապագա սերունդների շահերը: Կոնվենցիայի նշանակությունը նաև այն է, որ բնապահպանական համաձայնագիր լինելուց զատ՝ այն վերաբերում է պետական մարմինների գործունեության թափանցիկությանը, հաշվետվողականությանը, արձա-

զանքելու կարողությանը¹: Սահմանելով իրավահարաբերությունների կարգավորման նվազագույն չափորոշիչներ՝ Օրիուսի կոնվենցիան լայն հնարավորություններ է ստեղծում ազգային օրենսդրության շրջանակներում նախատեսել առավել նպաստավոր միջոցներ ու պայմաններ էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրավունքի իրացման ու պաշտպանության համար: Գտնում ենք, որ էկոլոգիական տեղեկատվության առանձնահատկություններից ելնելով և նկատի ունենալով այդ տեղեկատվության կարևոր դերն ու նշանակությունը մարդու՝ առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի իրացման գործում՝ ՀՀ-ում լուրջ առաջընթացային քայլ կհամարվի Օրիուսի կոնվենցիայի հիման վրա «Էկոլոգիական տեղեկատվության մասին» օրենքի ընդունումը, ինչը, մեր խորին համոզմամբ, հաշվի առնելով ՀՀ-ում ձևավորված պրակտիկայի թերություններն ու բացերը, առավել մանրամասն ու լիարժեք իրավական կարգավորման կենթարկի այս ոլորտի հարաբերությունները:

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ДОСТУПА К ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ В КОНТЕКСТЕ КОНВЕНЦИИ «О ДОСТУПЕ К ИНФОРМАЦИИ, УЧАСТИИ ОБЩЕСТВЕННОСТИ В ПРОЦЕССЕ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ И ДОСТУПЕ К ПРАВОСУДИЮ ПО ВОПРОСАМ, КАСАЮЩИМСЯ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ»

Аида Искоян

Профессор кафедры гражданского процесса ЕГУ,

Руководитель Научно-образовательного центра экологического права,

кандидат юридических наук

Олимпия Гегамян

Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,

кандидат юридических наук

Настоящая статья рассматривает правовые основы доступа к экологической информации, созданные в рамках Орхусской Конвенции. Авторы представляют и обсуждают понятие экологической информации, условия и сроки ее предоставления и практические вопросы при реализации права на доступ к информации (ст. 4 Орхусской Конвенции). Особое внимание уделяется

¹ Տե՛ս **Искоян А.Б.**, Экологическое право и институты гражданского права // Евразийская интеграция: правовой и образовательный аспекты: Материалы междунар. науч.-практ. конф. (Новосибирск, 3-5 декабря 2014) и II Школы интерэкоправа (Новосибирск, 4-5 декабря 2014) // Под ред. **В.С. Курчеева, В.А. Прошина, Е.А. Высторобеца и др.** Новосибир. гос. ун-т. – Новосибирск: РИЦ НГУ, 2015, էջ 218: **Ա.Բ.Իսկոյան, Օ.Մ.Գեղամյան, Հ.Ս.Հախվերդյան, Լ.Տ.Պետրոսյան**, Շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին հասարակության մասնակցության ուղեցույց, Երևան, 2015, էջ 22:

правовым основам отказа в предоставлении экологической информации, что является одним из центральных вопросов предмета исследования.

Авторы пришли к выводу, что в целях обеспечения эффективной имплементации Орхусской Конвенции в Армении должен быть принят новый Закон «Об экологической информации». Такой закон должен отражать основные положения Орхусской конвенции и заполнить пробелы национальной правовой системы в этой области. Это позволит более эффективно защищать права и свободы человека в контексте доступа к информации.

LEGAL REGULATORY FRAMEWORK OF ACCESS TO ENVIRONMENTAL INFORMATION IN THE CONTEXT OF THE CONVENTION ON ACCESS TO ENVIRONMENTAL INFORMATION, PUBLIC PARTICIPATION IN DECISION MAKING PROCESS AND ACCESS TO JUSTICE

Aida Iskoyan

*Professor at the YSU Chair for Civil Procedure,
Candidate of Legal Sciences,
Head of the Scientific Research Center for Environmental Law*

Olympia Geghamyan

*Candidate of Legal Sciences,
Assistant at the YSU Chair of Civil Procedure*

The present article discusses legal framework created under the Aarhus Convention regarding accessibility of information on environmental matters. The authors represent and discuss notions of environmental information, conditions and time terms under which it can become accessible and practical issues while implementing right to access to information (Article 4 of the Aarhus Convention). Particular attention is paid to grounds of rejecting access to environmental information, which represent one of the main points of the subject matter.

The authors conclude that in order to ensure effective implementation of the Aarhus Convention a new law on environmental information shall be adopted. Such law shall reflect the main provisions of the Aarhus Convention while fill the gaps in national legal system. This will allow to for better protection of human rights and freedoms in the context of access to information.

Բանալի բառեր – էկոլոգիական տեղեկատվություն, ողջամիտ ժամկետ, էկոլոգիական տեղեկատվության տրամադրման պայմաններ

Ключевые слова – экологическая информация; сроки; условия предоставления экологической информации

Key words – environmental information, as soon as possible, conditions for the provision of environmental information